

ՊԱՏՄԱԿԱՆ

ՆԻԻԹԵՐ ՍԵՐԱՍԱՅԱՑ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ

Շուրջ երկու տարի առաջ տեղեկացանք թէ Բարիպահայ ծանօթ բանասէր Պրն. Հայկ Պէրպէրեան, որ աւելի քան տասնեակ մը տարիներ առաջ Սերաստահայոց պատմագրքին խմբագրութիւնը ստանձնած էր, անկարող դառնալով այլեւս իր յանձնառութիւնը կատարելու, Սերաստահայոց Հայրենակցականը, ճարահատ, այդ պաշտօնը յանձնած էր Հայաստանէն երեք բանասէրներու, որոնցմէ երկուքն են՝ Պրն. Առաքել Պատրիկ եւ Պրն. Սուրէն Գօլանճեան:

Անցեալ տարւոյ ամբաստան Օրթոդոքս Ս. Աստուածածին եկեղեցւոյ 160-ի չափ հասկնէն ձեռագրերնեւուն ընդարձակ ցուցակը կազմելու պատենութիւնը վիճակուեցաւ մեզ: Նկատի առնելով անոր գեւա անտիպ ըլլալը, պատմագրքին խմբագրութեան ղեկին ծառայութիւն մը մատուցանելու նպատակաւ, անցեալ տարւոյ Յուլիս ամսուան վերջերը Սերաստահայոց վերաբերեալ յիշատակարաններ քաղելով, քիչ ետք յանձնած էինք Հ. Ռիբեմ Վրգ. Պօղոսեանի, խմբագրութեան յղելու համար: Մեր յարգելի բարեկամը մինչեւ օրս ստացման մասին որեւէ լուր չունենալով, որոշեցինք զայն հըրատարակել ՎՍԻՌՈՅԻ մէջ, նկատի առնելով որ պատմագրքին խմբագրութեան հասցէն մեզ անձանօթ է: Միւս կողմէ խորհեցանք թէ՛ պարունակութիւնը բանասէրները ընդհանրապէս եւ մատենադէտները մասնաւորապէս կը շահագործէ:

Այս առթիւ նշենք որ Պոլսոյ Աղզ. Պատրիարքարանի ղեկանատունը գտնուող Սերաստիոյ թղթածրարներուն մէջ առատ եւ շահեկան նիւթեր կան Սերաստահայոց պատմութեան համար: Հետեւաբար առանց այս փաստաթղթերէն օգտուելու կազմուելիք յիշատակարան մը թերի պիտի ըլլայ: Ուստի Սերաստահայոց Հայրենակցականը

լաւ կ'ընէ եթէ Պոլսէն կամ դուրսէն ձեռնհաս անձ մը նշանակէ յիշեալ թղթածրարներէն քաղուածքներ կատարելու համար: Եթէ ժամանակնիս ներէ, յառաջիկային այս էջերուն վրայ մի քանի վաւերագրեր ներկայացնել պիտի ջանանք:

Անցնելով մեր բուն նիւթին, կ'ուզենք յայտնել թէ յիշատակարաններուն համառօտագրութիւնները վերցուցած եւ յատուկ անուններն ալ զլխագրով գրած ենք:

Ա. ԳՐԻԶՆԵՐ

1. Յովհաննէս Արեղայ Սեբաստացի – Գրիշն է թիւ 144 ձեռագրին, որ կը կոչուի «Մեկնութիւն վեցօրեայ Արարչութեան», Հեղինակ՝ Բարթողիմէոս Եպո. Աղբատ, տեղի՝ Կ. Պոլիս, ժամանակ՝ 1768, էջք՝ 16+255, գրութեան չափ՝ 13×7-5 սմ.:

Յիշատակարան (էջ 255)

«Եւ Քրիստոսի Աստուծոյ մեծոյ փառքնդ Հօր եւ Սուրբ Հոգւոյն յաւիտեանս յաւիտեանք ամէն: Գրեալ աւարտեցաւ օգնականութեամբ Աստուծոյ ի մեծն Պոլիս անոսմ Թօհաննու տրուպ արեղայի սեբաստացւոյ, քուրմ հայոց ՌՄԺԷ մոյեմբեր ամսոյ ի թիւ»:

2. Քրիստիան Դպիր Սեբաստացի – Գրիշն է թիւ 70 ձեռագրին, որ կը կոչուի «Ողբ Եղիսիոյ», Հեղինակ՝ Ս. Ներսէս Շորհրհալի, տեղի՝ Կ. Պոլիս, Պէտիկթաշ, ժամանակ՝ 1822, էջք՝ 32, գրութեան չափ՝ 21×14 սմ.:

Յիշատակարան (էջ 32)

«Ընթերցեալիս Դպիր Քրիստիան Դպիր սե-

բաստացու՝ յաշակերտէ Գերապատի տեա-
որն Պետրոս մեծիմաստ վարդապետի ա-
շակերտի Տեառն Տեառն Պօղոս Աստուածի-
մաստ Արքեպիսկոպոսի եւ եղբայրս պատ-
րիարքի անդրիմոնպօլսեցւոյ, յամի Տեա-
որն 1822 Մարտի 22. ի հայոց ազգիս վա-
թարանն որ ՚ի Պէշիկթաշ»:

Բ. Ս Տ Ա Ց Ո Ղ Ն Ե Ր

1. Թորոս վրդ. Սեբաստացի - Ստացողն է թիւ 63 ձեռագրին, որ կը կոչուի «Համա-
նոստ Մեկնութիւն Գրացն Արարածոց»: Հե-
ղինակ՝ Վարդան Վրդ. եւ աշակերտ՝ Գե-
րգոր, տեղի՝ Հալապ, ժամանակ՝ 1645,
հիշ.՝ 485, զրութեան չափ՝ 12.5 x 9 սմ.:

Յիշատակաբան (էջ 484ր)

«Փառք ամենատարբերորդութեան Հօր
եւ Որդւոյ եւ Հոգւոյն սրբոյ յաւիտեանո
ամէն: Որ եւ շնորհիւն Աստուծոյ տարտե-
ցաւ առակի մեկնիչս ձեռամբ Կառման
Աստուածատուր իրիցու ի քվականիս մե-
րոյ Բ.Ղ. ի սեպտեմբերի. Ժ. ի հայրապե-
տութեան հայոց տեառն տէր Սիմէոն Կա-
թողիկոսին եւ ի առաջնորդութեան մերոյ
Ներսէս վարդապետին: Եւ արդ եղեւ խնդ-
րոյ առաքիս սեփաստացի վարժապետն եռա-
մեծ գհաջ բարեմաստացի վարժապետն եռա-
մեծ գհաջ բարեմաստացի տուրք հօրն մերոյ
տէր Սիմէոն կաթողիկոսին. ի վայելումն
անձին իւրոյ եւ յիշատակ ծրնազաց իւրոց.
արք համդիպիք արա օրինակելով կամ կար-
գալով յիշտիք ի մաքաբայլ ազօթս մեր
խնդրելով գրողութիւն յանցանաց. Տէր
Աստուած բարով վայելի տացէ մեա, ամէն:

Արդ գրեցաւ գիրքս այս ի Հալապ, ընդ
հովանեաւ տուրք Աստուածամիմ եւ տուրք
Քառասունք եկեղեցեացս եւ այլ սրբոց որ
աստ կամ հաւաքեալ: Անմեղադիր լիբով քի
կար մեր այսչափ էր»:

2. Յովհաննէս Մ. վրդ. Սեբաստացի -
Ստացողն է թիւ 47 ձեռագրին, որ կը կոչ-
ուի «Մեկնութիւն Գրացն Առաքմանի եւ Դան-
իէլի Մարգարէիցն»: Հեղինակ՝ Վարդան
Վարդապետ, տեղի՝ Եւֆրատայ, ժամանակ՝
1763, հիշ.՝ 833, զրութեան չափ՝ 15.5 x 10
սմ.:

Յիշատակաբան (էջ 833ա)

«Փառք ներառութեանն Աստուծոյ որ ետ
կարողութիւն անիմատ գրչի Աստուածա-
տուր չնչին մեղապարտ քանանայի հապա-
նել ի յաւարտ գրոյս՝ որ է մեկնութիւն եր-
գոց երգոյն Առաքմանի: Արդ աւարտեցաւ
ոս ի գիւղաւաղաւն յեւֆրատայ ընդ եւ-
վանեաւ սրբոյն Ստեփաննոսի մախավկա-
յին եւ այլ բազմահաւաք սրբոցն որ աստ
կան: Ի քվականիս Հայոց- Բ.Տ.Ճ.Բ. Եւ ի
առաջնորդութեան յայս մեղանգին Դիտա-
պետի տեառն՝ Գարեք ընմարանութեան
Աստուածիմատուր ձգնազեաց վարդապետի
արքեպիսկոպոսի: Եւ ստացաւ եւ գրել ե-
ւուր զօսյ սեբաստացի Յովհաննէս գերգ-
գօն վարդապետն յիշատակ իւր եւ ծնօղացն
իւրով ի վայելումն անձին իւրոյ եւ առ յա-
պալ եկելոց զոր Տէր Յիսուս բարեաւ վա-
յելի տացէ եւ ընդ երկայն աւուրս արասցէ
թարք իմիք վնասուց պահեսցէ զոր Տէր
Աստուած իւրաքանչիւրոցն վարձս բարեաց
պարգեւեցէ ըստ իւրում առաւ գրութեա-
նըն. Ամէն»:

Յիշատակագրութիւնք (էջ 85ա - 85բ)

«Զստացօղ սարին սեբաստացի Յովհան-
նէս ծայրագոյն վարդապետն եւ զծնօղն իւր
ի գիրն կենդանի գրեալ՝ Բրիստոս Աստուած
ընդ մէրն եւ զմեղապարտ ծրօղս Աստուա-
ծատուր երէցս եւ զմաղաղ սարին, հարա-
զաւ որդին իմ Յովհաննէս երէցս»: